Հայտարարություն

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ մանկավարժական աշխատողների ընտրության համար.

1. Տնօրենի ուսումնական գծով տեղակալ՝ մեթոդիստ 1,25 դրույքաչափ
2. Դաստիարակ՝ 1,17 դրույքաչափ
3. Երկարօրյա խմբի դաստիարակ՝ 0,36 դրույքաչափ
4. Ֆիզկուլտուրայի հրահանգիչ՝ 1,5 դրույքաչափ

Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի, իսկ հարցազրույցը՝ հաստատության կազմած հարցաշարով: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Տնօրենի ուսումնական գծով տեղակալ՝ մեթոդիստի որակավորման պահանջները՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Դաստիարակի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Երկարօրյա խմբի դաստիարակի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

ֆիզկուլտուրայի հրահանգչի որակավորման պահանջները՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն՝ նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և վերջին տասը տարվա ընթացքում ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի առնվազն երեք տարվա ստաժ:

Դիմող քաղաքացիները թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ կամ Վաղարշապատի համայնքապետարան են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ

կամ զինվորական կցագրման վկայական,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. օգոստոսի 19-ից մինչև սեպտեմբերի 15-ը ներառյալ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 17:00-ն:

Տնօրենի ուսումնական գծով տեղակալ՝ մեթոդիստի մրցույթը կկայանա 2026 թվականի սեպտեմբերի 22-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի կրթության և մշակույթի բաժնում /հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մաշտոց 0/:

Դաստիարակի թափուր պաշտոնի մրցույթը կկայանա 2026 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 11:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում /հասցե ք.Էջմիածին Բաղրամյան 18/3:

Երկարօրյա խմբի դաստիարակի մրցույթը կկայանա 2026 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 14:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում /հասցե ք.Էջմիածին Բաղրամյան 18/3:

Ֆիզկուլտուրայի հրահանգչի մրցույթը կկայանա 2026 թվականի սեպտեմբերի 22-ին, ժամը 14:00-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում /հասցե ք.Էջմիածին Բաղրամյան 18/3:

Տեղեկությունների համար զանգահարել 093-34-57-35 հեռախոսահամարով:

Հասցե՝ ք. Էջմիածին, Բաղրամյան 18/3:

Էլ. հասցե՝ tiv3tsitsernak@mail.ru